

**ՈՒՍՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Վարկերի տրամադրման աշխարհագրական շրջանակը	Հայաստանի Հանրապետություն
Նպատակային նշանակությունը	Ուսման վճարի համար
Վարկառուներ	1. Ուսանող/Ընտանիքի անդամ / 2. ՀՀ ռեզիդենտ, 18 տարին լրացած ֆիզիկական անձինք
Տրամադրվող գումարի մեծությունը	մինչև 1.000.000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման եղանակը	Վարկը տրամադրվում է փուլերով, կիսամյակային կտրվածքով՝ ոչ ավել քան 500.000 ՀՀ դրամը
Տարեկան անվանական տոկոսադրույքը	սկսած 10 %-ից մինչև 24%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	10.54%-ից մինչև 67.82%
Վարկի ժամկետը	1-ից մինչև 12 ամիս
Վարկի դիմում-հայտի ուսումնասիրության վճար	5.000 ՀՀ դրամ
Վարկի գումարի տրամադրման միջնորդավճար	Տրամադրվող գումարի 0-2 %-ի չափով
Վարկի սպասարկում	Ամսական վճարներ չկան
Վարկի մայր գումարի վաղաժամկետ մարում	Սահմանափակումներ չկան
Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցը երաշխավորություն	Երաշխավոր կարող են հանդիսանալ Վարկառուի ծնողները կամ մերձավոր բարեկամներ
Երաշխավորին ներկայացվող պահանջներ	1. 6 ամիս չընդհատված աշխատանքային փորձ վերջին աշխատանքային վայրում 2. Հաճախորդի հիմնական աշխատանք չունենալու, թոշակառու կամ ժամանակավորապես անաշխատունակ լինելու դեպքում նա պետք է ունենա այլ եկամուտներ: Եկամուտների տակ հասկացվում են վարձակալությունից ստացված եկամուտները, թոշակները, կազմակերպություն հանձնած բերքի (սպրանքի) դիմաց գյուղատնտեսական եկամուտներ, ձեռնարկատիրական

	գործունեությունից ստացված եկամուտներ, ինչպես նաև այլ եկամուտներ:
Երաշխավորի վարկային պատմության հանդեպ պահանջներ	1. Գործող վարկը չպետք է լինի ժամկետանց վարկային պատմության ստուգման պահին: 2. Ժամկետանց օրերի քանակը բոլոր վարկերի գծով վերջին 12 ամիսների ընթացքում չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը:
Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետը	1 աշխատանքային օր՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո
Տոկոսագումարների հաշվարկման և վճարման կարգը	Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությամբ
Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% չափով տույժ ժամկետանց վարկի մայր գումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար
Ժամկետանց տոկոսագումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% չափով տույժ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար
Վարկառուի վարկային պատմության հանդեպ պահանջներ	1. Գործող վարկը չպետք է լինի ժամկետանց վարկային պատմության ստուգման պահին: 2. Ժամկետանց օրերի քանակը բոլոր վարկերի գծով վերջին 12 ամիսների ընթացքում չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը:
Երաշխավոր	1.Երաշխավոր՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ 2.Երաշխավորի հանդեպ պահանջներ՝ վարկառուի հանդեպ պահանջներին համանման